մինչև կորեցաւ անձրևն, և ապա գնացաք ի տուն։ Օրս Եղիազար վարդապետն ի Ղալաթիա գնաց։

Ուրբաթ օր (30 Մայիս)։

Շաբաթ օր (31 Մայիս) գնացի ի ժամ. երեկոյիս ի Սուրբ Նիկողոս գնացի եւ քարոզ ասաց Խաչատուր վարդապետն, և անտի գնացի հետ Մղտեսուն ի տուն, եւ ելեալ ի տուն գնացի։

Կիրակի օր Յունիս ամիս. ի ժամն մեր գնացի եւ զՏէր Պետրոսն Զիմառցին ի չլայէն հանեցին եւ պատարագ արաւ, և Տէր Յակոբն ձայնեաց զիս և բռնութեամբ հագոյց շապիկս՝ սակս դպրութեան։ Նոյեմբերէն ի վեր չի արարի դպրութիւն և այսօր հագայ շապիկ եւ արարի զդպրութիւն։ Եւ յետ պատարագին տարաք զնորընծայն ի տուն եւ նստաք անդ զհացն ուտել, և յետ հացին ելաք անտի և ամենեքեան գնացին իւրաքանչիւր տեղիսն։ Եւ ի ժամուս յայսմ եկան ուխտաւորք Երուսաղէմայ եւ բերին խապար թէ յոյժ խաղաղութեամբ են եղեալ Հռոմքն առ մեզ և զլոյսն եղբօր պէս է առեալ վասն երկնչելոյն։ Եւ յետ զայս լսելոյն գնացի առ Ծառուկն մեր և գնացաք ընդ Սարգիսին եւ ընդ Ղումրուն ի ծովեզր Ղումղափուին եւ նստաք ի նաւ, շուրջ եկաք ի վերայ ծովուն մինչ ի Նաւլըղափուն և անդ ելեալ ապահովացաք, և դարձեալ մտեալ ի նաւ եկաք ի տունս մեր։

Բշի (2 Յունիս). վարդապետն Եղիազար ի յԱստուածածին եկաւ։ Երեկոյիս ի Մղսոնցն գնացի։

Դշի օրս (3 Յունիս) եկն Հուսէինն մեր առ աղայիւն իւր, որ գնացեալ էին ի տուն Անտոնին ի Պուրսա՝ զապտ անել զգանձ նորա. ոչ մի ըստակ չը գտեալ, այլ ըռզակ և տան կապք և կահք, զի ըստակն նա յառաջմանէ ի Ֆռանգն ուղարկեալ՝ ի ժամանակէ Իփ-